

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ միակ
բաժնետիրոջ 14.06.2011թ. թիվ 3 որոշմամբ

Գլխավոր տնօրենի
Ժամանակավոր պաշտոնակատար

_____ Կարեն Զաքարյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում
30.06.2011թ.

Գրանցման № 1___
Կենտրոնական բանկի նախագահ

_____ Արթուր Զավադյան

**ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ**

**ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
նոր խմբագրությամբ**

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակ հետապնդող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:
- 1.2. Ընկերությունն ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք), «Արժեթղթերի շուկայի մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջներին համապատասխան և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Օրենսգրքով, օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ:
- 1.3. «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերությունը «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» Բաց բաժնետիրական ընկերության իրավահաջորդն է, որը հանդիսանում է Հայաստանի Ֆոնդային Բորսա ինքնակարգավորվող կազմակերպության իրավահաջորդը:
- 1.4. Ընկերության ֆիրմային անվանումն է՝ հայերեն լրիվ՝ «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերություն հայերեն կրճատ՝ «ՆԱՍԴԱԶ ՕԷՄԷԶՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ

**ռուսերեն լրիվ՝ Открытое Акционерное Общество “НАСДАК ОЭМЭКС Армения”
ռուսերեն կրճատ՝ ОАО “НАСДАК ОЭМЭКС Армения”**

**անգլերեն լրիվ՝ “NASDAQ OMX Armenia” Open Joint Stock Company
անգլերեն կրճատ՝ “NASDAQ OMX Armenia” OJSC**

- 1.5. Ընկերության գործունեության ժամկետը չի սահմանափակվում:
- 1.6. Ընկերության իրավաբանական և փոստային հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, 0010, Սիեր Մկրտչյան 5բ:

Գլուխ 2. Ընկերության գործունեության առարկան ու նրա կողմից իրականացվող գործառույթները

- 2.1. Ընկերության ստեղծման նպատակն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության կանոններով սահմանված գործառույթների իրականացումն է և դրանց իրականացման արդյունքում մատուցվող ծառայություններից և կատարվող աշխատանքներից շահույթի ստացումը:
- 2.2. Ընկերության հիմնական գործունեությունն արժեթղթերի առևտրի կազմակերպումն է:
- 2.3. Ընկերությունն իրավունք ունի կազմակերպել արտարժույթի հրապարակային առևտուր «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության կանոններով սահմանված պահանջներին համապատասխան: Այդ դեպքում Ընկերությունն իրավունք ունի իրականացնելու նաև արտարժույթի հրապարակային առևտրի ընթացքում կնքված գործարքների արդյունքում ծագած փոխադարձ պարտավորությունների (պահանջների) որոշում և հաշվանցում (քլիրինգ):
- 2.4. Ընկերությունն «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, դրան համապատասխան ընդունված նորմատիվ իրավական ակտերով և Ընկերության կանոններով սահմանված պահանջներին համապատասխան իրավունք ունի իրականացնելու իրավական ակտերով չարգելվող այլ գործունեություն:

Գլուխ 3. Ընկերության իրավական կարգավիճակը

- 3.1. Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում վերագրանցման և վերալիցենզավորման պահից:
- 3.2. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է հաշվարկային և այլ հաշիվներ բացել բանկերում: Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), դրոշմակնիք, ձևաթղթեր, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային, առևտրային, սպասարկման և այլ նշաններ:
- 3.3. Ընկերությունն ունի սեփական առանձնացված գույք, կարող է իր անունից մասնակցել գույքային շրջանառությանը, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 3.4. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
- 3.5. Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

Գլուխ 4. Ընկերության մասնաճյուղերը և ներկայացուցչությունները

- 4.1. Ընկերությունն իրավունք ունի ստեղծելու մասնաճյուղեր և ներկայացուցչություններ՝ Օրենսգրքին, օրենքին և այլ իրավական ակտերին համապատասխան:
- 4.2. Ընկերությունն օտարերկրյա պետություններում ստեղծում է մասնաճյուղեր, ներկայացուցչություններ՝ մասնաճյուղերի, ներկայացուցչությունների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:
- 4.3. Մասնաճյուղն Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որն իրականացնում է նրա բոլոր գործառնությունները կամ դրանց մի մասը՝ ներառյալ նաև ներկայացուցչության գործառնությունները:
- 4.4. Ներկայացուցչությունն Ընկերության գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Ընկերության շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:
- 4.5. Մասնաճյուղերը, ներկայացուցչությունները իրավաբանական անձինք չեն ու գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա:
- 4.6. Ընկերությունը մասնաճյուղերին, ներկայացուցչություններին տրամադրում է գույք: Մասնաճյուղերի, ներկայացուցչությունների գույքը հաշվառվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ՝ Ընկերության հաշվեկշռում:
- 4.7. Մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ղեկավարներին պաշտոնի նշանակում է Ընկերությունը, և նրանք գործում են Ընկերության լիազորագրի հիման վրա:
- 4.8. Մասնաճյուղերը, ներկայացուցչությունները գործում են Ընկերության անունից: Դրանց գործունեության համար պատասխանատվություն է կրում Ընկերությունը:

Գլուխ 5. Ընկերության գույքը և կանոնադրական կապիտալը

- 5.1. Ընկերության գույքը կազմված է հիմնական և շրջանառու միջոցներից, ինչպես նաև արժեթղթերից, որոնց արժեքն արտացոլվում է Ընկերության ինքնուրույն հաշվեկշռում:
- 5.2. Ընկերության գույքի ձևավորման աղբյուրներն են՝
 - ա) Ընկերության բաժնետերերի կողմից որպես ավանդ ներդրված դրամական և նյութական միջոցները,
 - բ) Ընկերության տնտեսական գործունեության արդյունքները (արտադրանքը, ստացված եկամուտները),
 - գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ձևերով ձեռք բերված այլ գույքը:

- 5.3. Ընկերության բաժնետերը կարող է ներդնել դրամ, արժեթղթեր, այլ գույք՝ ներառյալ գույքային և դրամական գնահատում ունեցող մյուս իրավունքները:
- 5.4. Եթե գույքը, նյութական արժեքները, ֆինանսական և այլ միջոցներն Ընկերությանը հանձնվել են օգտագործման իրավունքով, ապա համապատասխան բաժնետերվարձատուի ներդրման չափը որոշվում է այդ գույքի օգտագործման դիմաց տրվող վարձավճարի գումարի չափով: Այդ գույքի պատահական կորստի կամ վնասի ռիսկը կրում է գույքի նկատմամբ իրավունքը ներդրած բաժնետերը:
- 5.5. Ընկերության գործունեությունն ապահովելու նպատակով հիմնադիրների ներդրումների հաշվին ստեղծվում է կանոնադրական կապիտալ: Ընկերության կանոնադրական կապիտալը կազմված է Ընկերության բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:
- 5.6. Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:
- 5.7. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 344,340,000.00 (երեք հարյուր քառասունչորս միլիոն երեք հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ: Թողարկված է 5,739 հինգ հազար յոթ հարյուր երեսունհինգ) հատ հասարակ անվանական բաժնետոմս (այսուհետ՝ բաժնետոմս)՝ յուրաքանչյուր բաժնետոմսի անվանական արժեքը՝ 60,000.00 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:
- 5.8. Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող պակաս լինել օրենքով սահմանված չափից:
- 5.9. Ընկերության 5,739 (հինգ հազար յոթ հարյուր երեսունհինգ) հատ բաժնետոմսերը տեղաբաշխված են և սեփականության իրավունքով պատկանում են միակ բաժնետեր Շվեդիայի Թագավորությունում գրանցված «ՕԷՄԷՔՍ Ակթիերոլագ» բաց սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը, գրանցման համարը՝ N 556243-8001, գրանցման ամսաթիվը՝ 30.07.1984թ., հասցեն՝ 10578, Շվեդիա, ք. Ստոկհոլմ, Թուվաքթոնգեն 15:
- 5.10. Ընկերության հայտարարված բաժնետոմսերի քանակը կազմում է 600,000,000.00 (վեց հարյուր միլիոն) ՀՀ դրամի 10,000 (տաս հազար) հատ 60,000.00 (վաթսուն հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) ոչ փաստաթղթային անվանական բաժնետոմսերից:
- 5.11. Ընկերությունը կարող է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ ավելացնել իր կանոնադրական կապիտալի չափը՝ բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով: Ընդ որում լրացուցիչ բաժնետոմսեր թողարկելու միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը կարող է իրականացվել միայն կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի քանակի սահմաններում:
- 5.12. Ընկերությանը չի թույլատրվում վնասները ծածկելու համար ավելացնել Ընկերության կանոնադրական կապիտալը:
- 5.13. Ընկերությունը կարող է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ նվազեցնել իր կանոնադրական կապիտալի չափը՝ բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը նվազեցնելու և Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր թիվը պակասեցնելու նպատակով դրանց մի մասը գնելու միջոցով՝ ՀՀ Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում:
- 5.14. Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին որոշում ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում Ընկերությունը պարտավոր է բոլոր պարտատերերին տեղեկացնել Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ հրապարակել կանոնադրական կապիտալի նոր չափի մասին: Ընկերության պարտատերերն իրավունք ունեն Ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու մասին տեղեկություններն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Ընկերությունից պահանջելու վաղաժամկետ կատարել կամ դադարեցնել իրենց նկատմամբ ունեցած պարտավորությունները և հատուցել դրա հետևանքով պատճառված վնասները:

5.15. Ընկերությունն իրավունք չունի նվազեցնելու իր կանոնադրական կապիտալը, եթե նվազեցման պատճառով կանոնադրական կապիտալի չափը պակաս կլինի օրենքով սահմանված նվազագույն չափից:

Գլուխ 6. Ընկերության կապիտալները և գուտ ակտիվները

- 6.1. Ընկերությունը Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կարող է թողարկել ու տեղաբաշխել բաժնետոմսեր և այլ արժեթղթեր:
- 6.2. Ընկերությունն իրավունք ունի թողարկելու և տեղաբաշխելու միայն անբաժանելի, միևնույն արժեքն ունեցող ոչ փաստաթղթային հասարակ բաժնետոմսեր: Ընկերության անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը վարվում է մասնագիտացված կազմակերպության կողմից:
- 6.3. Ընկերության բաժնետոմսերը տեղաբաշխվում են Ընկերության բաժնետերերի ռեեստրում՝ նրանց արժեթղթերի հաշիվներում գրանցման տեսքով:
- 6.4. Ընկերությունն իրավասու է թողարկելու բաժնետոմսեր՝ միայն Ընկերության կանոնադրության մեջ հայտարարված բաժնետոմսերի թվի սահմաններում: Ընկերության բաժնետոմսերի գրավադրումն արգելվում է:
- 6.5. Ընկերությունը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել պահուստային կապիտալ: Պահուստային կապիտալն ստեղծվում է Ընկերության ստացած շահույթից, կանոնադրական կապիտալի 15 տոկոսից ոչ պակաս չափով, մասհանումների կատարման միջոցով: Եթե ստեղծված պահուստային կապիտալի փաստացի չափն Ընկերության կանոնադրությամբ սահմանվածից փոքր է, ապա այդ կապիտալին հատկացումները կատարվում են շահույթի 5 տոկոսից ոչ պակաս չափով:
- 6.6. Պահուստային կապիտալը, Ընկերության Դիտորդ խորհրդի որոշմամբ, կարող է օգտագործվել օրենքով նախատեսված նպատակներով:
- 6.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև սպառման, կուտակման, սոցիալական զարգացման, հատուկ նշանակության և այլ կապիտալներ, որոնք հետագայում օգտագործվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սահմանված կարգով: Ընկերության գուտ շահույթի չօգտագործված մասի նպատակային օգտագործման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

Գլուխ 7. Ընկերության բաժնետոմսերով հավաստվող իրավունքներն ու բաժնետերերի իրավունքները և պարտականությունները

- 7.1. Ընկերության յուրաքանչյուր հասարակ բաժնետոմս իր սեփականատերը հանդիսացող բաժնետիրոջը տալիս է միևնույն իրավունքները:
- 7.2. Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն՝
 - ա) մասնակցելու Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ այնտեղ քննարկվող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով,
 - բ) մասնակցելու Ընկերության գործերի կառավարմանը,
 - գ) ստանալու տեղեկատվություն Ընկերության գործունեության մասին և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ծանոթանալու հաշվապահական հաշվառման ու այլ փաստաթղթերի,
 - դ) մասնակցելու Ընկերության ստացած շահույթի բաշխմանը և դրա մասին որոշումների ընդունմանը,
 - ե) Ընկերության լուծարման դեպքում նրա պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո ստանալու մնացած գույքի իրենց հասանելիք մասը,
 - զ) Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում հանդես գալու համապատասխան առաջարկություններով, քվեարկելու իրենց պատկանող բաժնետոմսերի թվին համապատասխան ձայների չափով,

- ե) պահանջելու առողիտի անցկացում՝ Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով,
 - ը) օգտվելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:
- 7.3. Ընկերության բաժնետերերը պարտավոր են՝
- ա) չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնի տեղեկատվություն.
 - բ) օժանդակել Ընկերության գործադիր մարմիններին՝ Ընկերության գործունեության հստակ և արդյունավետ կազմակերպման գործում,
 - գ) Ընկերության գործունեության կազմակերպման և կառավարման մասին չընդունել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կանոնադրության պահանջներին հակասող որոշումներ,
 - դ) մասնակցել յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո տարեկան կամ Ընկերության բաժնետերերի արտահերթ հրավիրվող ընդհանուր ժողովներին:

Գլուխ 8. Ընկերության շահաբաժինների վճարման կարգը

- 8.1. Ընկերությունն իրավունք ունի ֆինանսական տարվա արդյունքների ամփոփման հիման վրա հայտարարելու իր տնօրինության տակ գտնվող զուտ շահույթից շահաբաժիններ վճարելու մասին:
- 8.2. Տարեկան շահութաբաժնի վճարման չափի, ժամկետի, կարգի և պայմանների մասին որոշումն ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության դիտորդ խորհրդի առաջարկությամբ:
- 8.3. Ընկերությունն իրավունք չունի հայտարարելու (որոշում ընդունելու) շահաբաժինների վճարման մասին, եթե՝
 - ա) շահաբաժիններ վճարելու մասին որոշման ընդունման պահի դրությամբ Ընկերության տնտեսական վիճակում առկա են անվճարունակության (սնանկացման) հատկանիշներ կամ նշված հատկանիշներն ի հայտ կգան շահաբաժինների վճարման հետևանքով,
 - բ) Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով,
 - գ) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Գլուխ 9. Ընկերության կառավարումը

- 9.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է (այսուհետ նաև՝ ժողով):
- 9.2. Ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում հրավիրել Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով: Անհրաժեշտության դեպքում կարող են հրավիրվել Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովներ:
- 9.3. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի հրավիրման ժամկետի, տեղի և օրակարգի մասին որոշումն ընդունում է Ընկերության դիտորդ խորհուրդը: Ժողովի գումարման մասին Ընկերության բաժնետերերը ծանուցվում են առձեռն և/կամ ժողովի հրավիրման մասին ծանուցումը էլեկտրոնային փոստով ուղարկելու միջոցով՝ ժողովի հրավիրման օրվանից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ:
- 9.4. Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի.
 - ա) Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը.
 - բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
 - գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
 - դ) ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

- ե) բաժնետերերի կողմից ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին ծանոթանալու կարգը, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:
- 9.5. Ժողովի նախապատրաստման ընթացքում դիտորդ խորհուրդը որոշում է.
- ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
 - բ) ժողովի օրակարգը
 - գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
 - դ) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը
 - ե) ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.
- 9.6. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝
- ա) Ընկերության կանոնադրությունը և նրա կանոնադրական կապիտալի չափի փոփոխելը,
 - բ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամների ընտրությունների անցկացումը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը,
 - գ) Ընկերության գործադիր մարմիններ կազմավորելը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը,
 - դ) Ընկերության տարեկան հաշվետվությունները, հաշվապահական հաշվեկշիռները, շահույթների և վնասների հաշիվները հաստատելն ու բաշխելը, ամենամյա նախահաշիվները հաստատելը,
 - ե) Ընկերության վերակազմակերպման, լուծարման, լուծարային հանձնաժողովի անդամների նշանակման, լուծարային հաշվեկշիռների հաստատման մասին որոշումներ ընդունելը,
 - զ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
 - է) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշում ընդունելը՝ օրենքով նախատեսված դեպքերում,
 - ը) Ընկերության գործադիր մարմինների կառուցվածքի հաստատումը,
 - թ) Ընկերության ներքին կանոնների ու կանոնակարգերի հաստատումը, ինչպես նաև դրանցում փոփոխությունների և/կամ լրացումների կատարումը, բացառությամբ Օրենքով սահմանված Բորսայի կանոնների,
 - ժ) Ընկերության կողմից դուստր ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերությունների աշխատանքներին նրա մասնակցությունը,
 - ժա) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
 - ժբ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
 - ժգ) օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:
- 9.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:
- 9.8. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողով՝ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:
- 9.9. Քվեարկությունը ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կոմուլյատիվ) քվեարկության սկզբունքը:
- 9.10. 9.6. կետի է), ժա) և ժբ) ենթակետերով սահմանված հարցերի մասին որոշումները ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, մնացած հարցերի մասին ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին

մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենսդրությամբ ձայների ավելի մեծ քանակ չի պահանջվում:

- 9.11. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը Հայաստանի Հանրապետության օրենքով վերապահված հարցերը չեն կարող նրա կողմից փոխանցվել Ընկերության դիտորդ խորհրդի կամ գործադիր մարմնի իրավասությանը:
- 9.12. Ընկերության կանոնադրության փոփոխության՝ կապված կանոնադրական կապիտալի նվազեցման, վերակազմակերպման և լուծարման հետ Ընկերությունը պետք է ստանա Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) նախնական համաձայնությունը:
- 9.13. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը որոշումներ է ընդունում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին, այլ իրավական ակտերին, սույն Կանոնադրությանը և Ընկերության կանոններին համապատասխան:
- 9.14. Ընկերությունում ստեղծվում է դիտորդ խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհրդը Ընկերության կառավարման կոլեգիալ մարմին է, որն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) և Ընկերության կանոնադրությամբ վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը:
- 9.15. Խորհուրդը կազմված է հինգ անդամից՝ խորհրդի նախագահից և չորս անդամից:
- 9.16. Խորհրդի անդամը չի կարող միաժամանակ հանդիսանալ Ընկերության գործադիր մարմնի անդամ:
- 9.17. Խորհրդի անդամների թեկնածություններն առաջարկվում են Ընկերության բաժնետերերի կողմից՝ Օրենքով սահմանված կարգով:
- 9.18. Խորհրդի անդամներին ընտրում է տարեկան Ժողովը՝ Ժողովին մասնակցող Ընկերության բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ: Եթե մինչև Խորհրդի անդամի պաշտոնավարման ժամկետի լրանալը Ժողովի կողմից Խորհրդի նոր անդամ չի ընտրվել, ապա պաշտոնավարման ժամկետը լրացած Խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը երկարաձգվում է մինչև Խորհրդի նոր անդամի ընտրությունը:
- 9.19. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվելու դեպքում, պետք է հրավիրվի արտահերթ Ժողով՝ Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով Խորհրդի նոր անդամ ընտրելու նպատակով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են այն ժամանակ, երբ ընտրվում է հաջորդ Խորհուրդը:
- 9.20. Խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը սահմանվում է Ժողովի կողմից:
- 9.21. Խորհրդի նախագահին ընտրում են Խորհրդի անդամները, Խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
- 9.22. Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ Խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:
- 9.23. Խորհրդի անդամներն իրենց գործունեության համար չեն վարձատրվում:
- 9.24. Խորհրդի աշխատանքները կազմակերպվում են նիստերի ձևով: Խորհրդի որոշումները կարող են ընդունվել նաև հեռակա քվեարկության (հարցման) միջոցով:
- 9.25. Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահին իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտին իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի, ինչպես նաև Ընկերության կանոնադրությամբ սահմանված այլ անձանց պահանջով:
- 9.26. Խորհրդի անդամները Խորհրդի նիստերին մասնակցում են անձամբ:
- 9.27. Խորհրդի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում են Խորհրդի անդամների թվի կեսից ավելին:
- 9.28. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով, Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

- 9.29. Խորհրդի յուրաքանչյուր անդամը, այդ թվում Խորհրդի նախագահը քվեարկության ժամանակ ունի մեկ ձայն: Չայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է:
- 9.30. Հեռակա կարգով անցկացվող Խորհրդի նիստի օրակարգային հարցերի վերաբերյալ քննարկումները և հարցումները, ինչպես նաև քվեարկությունը անցկացվում են հեռախոսակապի կամ հեռաձայնային կապի այլ միջոցներով: Հեռակա կարգով անցկացված նիստի ավարտից հետո, Խորհրդի նախագահը կազմում է նիստի արձանագրությունը և էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկում Խորհրդի նիստին մասնակցած բոլոր անդամներին: Հեռակա կարգով Խորհրդի նիստին մասնակցած անդամները պարտավոր են ստորագրել նիստի արձանագրության իրենց օրինակը և ներկայացնել Ընկերությանը:
- 9.31. Խորհրդի ցանկացած անդամ կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից՝ այդ մասին Խորհրդի նախագահին նախապես ներկայացնելով գրավոր ծանուցում: Խորհրդի անդամ(ներ)ի իրավասությունների վաղաժամկետ դադարեցման կամ վերընտրման հետևանքով առաջացած թափուր տեղերը պետք է համալրվեն Ժողովի կողմից: Անկախ թափուր տեղի առկայությունից, Խորհուրդը շարունակում է մնալ իրավասու իր իրավասությունները կամ դրանց մի մասն իրականացնելու համար, եթե ապահովվում է սույն կանոնադրությամբ սահմանված քվորումը:
- 9.32. Խորհրդի բացառիկ իրավասություններն են՝
- ա) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,
 - բ) տարեկան և արտահերթ Ժողովների գումարումը,
 - գ) Ժողովների օրակարգի հաստատումը,
 - դ) Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը,
 - ե) Ընկերության վերակազմակերպման, Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման, Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշման, բաժնետոմսերի համախմբման (կոնսոլիդացման), բաժանման հարցերի ներկայացումը Ժողովների քննարկմանը,
 - զ) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացումը, եթե կանոնադրությամբ կամ Ժողովի որոշմամբ նրան տրված են այդպիսի լիազորություններ,
 - է) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
 - ը) Ընկերության գույքի շուկայական արժեքի որոշումը,
 - թ) Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը,
 - ժ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ Ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
 - ժա) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
 - ժբ) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
 - ժգ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
 - ժդ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
 - ժե) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում,

- ժգ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ Օրենքով նախատեսված դեպքերում,
 - ժե) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
 - ժը) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը,
 - ժթ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը,
 - ի) Ընկերության՝ որպես ֆոնդային բորսայի, կանոնների, կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի և դրանցում կատարվող փոփոխությունների և լրացումների հաստատումը,
 - իա) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը,
 - իբ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի որոշումը,
 - իգ) Օրենքով և կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
- 9.33. Դիտորդ խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:
- 9.34. Խորհրդի անդամներն իրավունք ունեն իրենց իրավասություններն իրականացնելիս հիմնվել Ընկերության աշխատակիցների, խորհրդատուների, հաշվապահների և այլ ծառայողների կողմից յուրաքանչյուր դեպքի համար մշակված այնպիսի տեղեկությունների, կարծիքների, հաշվետվությունների կամ եզրակացությունների վրա, ներառյալ՝ ֆինանսական հաշվետվությունները, որոնց մշակումը տվյալ աշխատակցի իրավասությունների մասն է կազմում:
- 9.35. Խորհուրդն իրավունք ունի Ընկերության ցանկացած աշխատողից ստանալ ցանկացած տեղեկատվություն, որը Խորհուրդը ողջամտորեն անհրաժեշտ կհամարի:
- 9.36. Խորհրդի նախագահը՝
- ա) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,
 - բ) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք,
 - գ) կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:
- 9.37. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները Խորհրդի որոշմամբ կատարում է Խորհրդի անդամներից մեկը:
- 9.38. Խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է առաջնորդվի Ընկերության շահերով՝ իր իրավունքներն ու պարտականությունները իրականացնելով բարեխիղճ և ողջամիտ կերպով այնպես, ինչպես կվարվեր ցանկացած այլ անձ մնան իրավիճակներում:
- 9.39. Խորհուրդը սույն կանոնադրության 9.32. կետի ի) ենթակետով սահմանված հարցը քննարկելուց հետո, պարտավոր է շահագրգիռ անձանց հնարավորություն ընձեռել ներկայացնելու հաստատման ենթակա Ֆոնդային բորսայի կանոնների վերաբերյալ առաջարկություններ, դիտողություններ և փաստարկներ: Կանոնների և կանոնակարգերի նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ շահագրգիռ անձանց տեղեկացման ժամկետները և կարգը որոշում է Ընկերության Խորհուրդը:
- 9.40. Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը մշակվում է Խորհրդի նախագահի կողմից՝ Ընկերության բաժնետերերի, Ընկերության կառավարման մարմինների ղեկավարների կամ Խորհրդի անդամների առաջարկությունների հիման վրա:
- 9.41. Օրակարգի նախագծում պետք է մշվի Խորհրդի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը:
- 9.42. Խորհրդի նիստի օրակարգի նախագծի վերաբերյալ առաջարկությունները պետք է Խորհրդի նիստի սահմանված օրվանից առնվազն յոթ օր առաջ գրավոր դիմումով ներկայացվեն Խորհրդի նախագահին՝ առաջադրվող հարցի շարադրմամբ և հիմնավորմամբ, որին կից ներկայացվում է առաջադրվող հարցի վերաբերյալ Խորհրդի որոշման նախագիծը:
- 9.43. Սույն կանոնադրության 9.42. կետում նշված փաստաթղթերի ոչ պատշաճ ներկայացման դեպքում խորհրդի նախագահն իրավունք ունի առաջադրվող հարցի քննարկումը չընդգրկել նիստի օրակարգի նախագծում:
- 9.44. Խորհրդի անդամներին Խորհրդի օրակարգի նախագծի, նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի վերաբերյալ տեղեկություններով, ներառյալ քննարկման ենթակա նյութերով (էլեկտրոնային եղանակով) և այլ անհրաժեշտ փաստաթղթերով ապահովում է տնօրենը՝ Խորհրդի նիստի գումարման օրվանից առնվազն 3 (երեք) օր առաջ:

- 9.45. Սույն կանոնադրության 9.44. կետում նշված ժամկետի ավարտից հետո հարցը օրակարգի նախագծում կարող է ընդգրկվել Խորհրդի որոշմամբ:
- 9.46. Խորհրդի անդամները նիստի գումարման օրվանից առնվազն երկու օր առաջ կարող են օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել խորհրդի նախագահին, որոնք պետք է բաժանվեն խորհրդի անդամներին:
- 9.47. Օրակարգը հաստատվում է Խորհրդի նիստի սկզբում: Օրակարգը կարող է հաստատվել ինչպես անբողջությամբ, այնպես էլ առանձին հարցերով:
- 9.48. Մինչև օրակարգի քննարկումը Խորհրդի նախագահը պարտավոր է Խորհրդի այլ անդամներին տեղեկացնել նախագծի ձևավորման ընթացքում ներկայացված բոլոր առաջարկությունների մասին՝ նշելով օրակարգում չընդգրկված հարցերը և օրակարգում չընդգրկելու պատճառները:
- 9.49. Մինչև օրակարգի հաստատումը Խորհրդի նախագահին իրավունք ունի առաջարկությունները և հարցերը օրակարգից հանել, եթե՝
- ա) նիստի օրակարգում հարցի ընդգրկման վերաբերյալ առաջարկություն ներկայացնողը չի մասնակցում Խորհրդի նիստին,
 - բ) առաջարկություն ներկայացնողը գրավոր կամ բանավոր դիմել է ներկայացված հարցը օրակարգից հանելու կամ Խորհրդի այլ նիստի օրակարգ տեղափոխելու խնդրանքով:
- 9.50. Խորհրդի արձանագրությունների կազմման և ձայների հաշվառման համար Խորհրդի նախագահը նիստից առաջ նշանակում է նիստի քարտուղար:
- 9.51. Խորհրդի նիստերը նախագահում է Խորհրդի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ նիստը նախագահում է Խորհրդի անդամներից որևէ մեկը, որն ընտրվում է նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:
- 9.52. Օրակարգի յուրաքանչյուր հարցի քննարկման ընդհանուր ժամանակը, որպես կանոն, չպետք է գերազանցի 40 րոպեն, եթե տվյալ հարցի քննարկման համար այլ բան նախատեսված չէ խորհրդի որոշմամբ: Օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ զեկույցի ժամանակը չպետք է գերազանցի 15 րոպեն, զեկուցողին հարցերի և դրանց պատասխանների ժամանակը՝ 10 րոպեն, ելույթների ժամանակը՝ 15 րոպեն (մեկ ելույթը՝ առավելագույնը 3 րոպե տևողությամբ):
- 9.53. Խորհրդի նիստն արձանագրվում է գրավոր: Խորհրդի նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո 5-օրյա ժամկետում:
- 9.54. Արձանագրությունում նշվում են՝
- ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
 - բ) նիստին ներկա անձինք,
 - գ) նիստի օրակարգը,
 - դ) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները,
 - ե) նիստում ընդունված որոշումները:
- 9.55. Արձանագրությունը ստորագրվում է նիստին մասնակցող Խորհրդի բոլոր անդամների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար: Խորհրդի նիստի արձանագրությունը ստորագրվելուց հետո տրամադրվում է Խորհրդի անդամներին:
- 9.56. Հեռակա քվեարկության (հարցման) միջոցով անցկացված նիստի արձանագրությունը ներառում է սույն կանոնադրության 9.54. կետով սահմանված տեղեկությունները և կազմվում է նիստին մասնակցած Խորհրդի անդամների քանակին համապատասխան: Արձանագրության յուրաքանչյուր օրինակը ստորագրվում է Խորհրդի միայն մեկ անդամի կողմից:
- 9.57. Ընկերության խորհրդի անդամները, տնօրենը, վերահսկողը, վերստուգողը և աուդիտ իրականացնող անձն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:
- 9.58. Ընկերության ընթացիկ գործունեությունը միանձնյա կարգով կազմակերպում և ղեկավարում է Ընկերության գլխավոր տնօրենը (այսուհետ՝ տնօրեն), որը պայմանագրային հիմունքներով պաշտոնի նշանակվում և պաշտոնից ազատվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ և հաշվետու է նրա առջև:

9.59. Ընկերության տնօրենը՝

- ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, Ընկերության անունից կնքում է պայմանագրեր, կատարում համապատասխան գործարքներ,
- բ) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում,
- գ) գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր,
- դ) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա բանկերում բացում է Ընկերության բանկային հաշիվներ՝ ինչպես դրամով, այնպես էլ արտարժույթով,
- ե) սահմանված կարգով աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Ընկերության տնօրենի տեղակալին (տեղակալներին) և աշխատողներին, որոնց նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
- զ) իր իրավասության սահմաններում ընդունում է որոշումներ, արձակում հրամաններ, կարգադրություններ, տալիս պարտադիր կատարման ենթակա հրահանգներ, ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
- է) Ընկերության իրավասու կառավարման մարմնի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ընկերության կառուցվածքը, աշխատանքի վարձատրության տարեկան ֆոնդը, ընթացիկ գործունեության իրականացման համար անհրաժեշտ կանոնակարգերը, ամենամյա նախահաշիվները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր ու միջոցառումների նախագծեր,
- ը) մշակում և Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Ընկերության գույքի տնօրինման և օգտագործման, հետագա գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ ու Ընկերության սոցիալ-տնտեսական զարգացման կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերը:

9.60. Ընկերության տնօրենի իրավասությանն է պատկանում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և Խորհրդի իրավասությունը չհանդիսացող Ընկերության ընթացիկ գործունեությանը վերաբերող բոլոր հարցերի լուծումը:

9.61. Ընկերությունում ստեղծվում է կարգապահական հանձնաժողով: Կարգապահական հանձնաժողովի անդամների, այդ թվում նաև՝ նախագահի ընտրության կարգը, հանձնաժողովին վերապահված իրավասությունները և պաշտոնավարման ժամկետը սահմանվում է Ընկերության Խորհրդի կողմից ընդունված կանոնակարգով:

9.62. Ընկերությունն ունի վերահսկող ծառայություն (այսուհետ՝ Ծառայություն): Ծառայության ձևավորման կարգը, Ծառայությանը ներկայացվող պահանջները, նրա պարտականությունները, գործառույթները և իրավասությունները սահմանվում են Ծառայության կանոնակարգով, որը հաստատվում է Խորհրդի կողմից:

9.63. Ընկերության խորհրդի, կամ գործադիր մարմնի անդամ, վերահսկող, կարգապահական հանձնաժողովի նախագահ կամ նման այլ մարմինների ղեկավար կամ անդամ (այսուհետ՝ Ընկերության ղեկավար) չի կարող լինել այն անձը, որը՝

- ա) օրենքով սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,
- բ) չունի օրենքով սահմանված մասնագիտական որակավորում,
- գ) դատավճռով զրկված է ֆինանսական, տնտեսական, իրավական ոլորտներում պաշտոններ վարելու իրավունքից՝ դրա մասին դատավճռում ուղղակի նշված լինելու դեպքում,
- դ) ճանաչված է սնանկ և ունի չմարված (չներված) պարտավորություններ,
- ե) անցյալում կատարել է այնպիսի արարք, որը Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ուղեցույցով հիմնավորված՝ Կենտրոնական բանկի կարծիքով հիմք է տալիս եզրակացնելու, որ տվյալ անձը՝ որպես Ընկերության ղեկավար, չի կարող պատշաճ կերպով կառավարել Ընկերության գործունեության

համապատասխան ոլորտը, կամ նրա գործողությունները կարող են հանգեցնել Ընկերության սնանկացմանը կամ ֆինանսական վիճակի վատթարացմանը կամ հեղինակության և գործարար համբավի վարկաբեկմանը:

- 9.64. Ընկերության ղեկավարը կամ աշխատակիցը (բացառությամբ խորհրդի անդամից կամ նախագահից) իրավունք չունեն լինելու ներդրումային ծառայություններ մատուցող որևէ անձի ղեկավար, պաշտոնատար անձ, աշխատակից կամ մասնակից:
- 9.65. Կենտրոնական բանկն իր որոշմամբ իրավունք ունի սահմանելու պահանջներ, որոնք անհրաժեշտ են Ընկերության կառավարման մարմինների և ղեկավարների իրավասությունները հստակ տարանջատելու համար:

Գլուխ 10. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը

- 10.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար ժողովն ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող):
- 10.2. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին եւ այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:
- 10.3. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է կանոնադրությամբ, ինչպես նաեւ ժողովի կողմից հաստատված ներքին փաստաթղթով՝ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կանոնակարգով:
- 10.4. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաեւ Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
- 10.5. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) օրենքով սահմանված դեպքերում իրավունք ունի պահանջել արտահերթ ընդհանուր ժողովի գումարում:
- 10.6. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, նրա մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների, հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերն ու բացատրությունները:
- 10.7. Վերստուգող հանձնաժողովի անդամներին (վերստուգողին) ընտրում է ժողովը՝ 3 տարի ժամկետով:
- 10.8. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է ժողովին:
- 10.9. Վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) վարձատրության եւ (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը եւ պայմանները սահմանվում են ժողովի որոշմամբ:
- 10.10. Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:
- 10.11. Ընկերության վերստուգող հանձնաժողովի քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող երեք հոգուց պակաս լինել:
- 10.12. Ժողովի որոշմամբ Ընկերության վերստուգող հանձնաժողովի իրավասությունները կարող են դրվել վերստուգողի վրա:
- 10.13. Վերստուգող հանձնաժողովի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Գլուխ 11. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը

- 11.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները, ինչպես նաև կանոնադրական կապիտալի չափի, բաժնետոմսերի գնի ու թվի փոփոխությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

- 11.2. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որն ընդունվում է ժողովին մասնակցած քվեարկող բաժնետերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի չափի ավելացման դեպքում՝ ձայների պարզ մեծամասնությամբ:
- 11.3. Մասնաճյուղի և (կամ) ներկայացուցչության ստեղծման կամ գործունեության դադարեցման մասին տեղեկությունները կարող են մտցվել Ընկերության կանոնադրության մեջ:
- 11.4. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գլուխ 12. Ընկերության վերակազմակերպումը և լուծարումը

- 12.1. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել և լուծարվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Արժեթղթերի շուկայի մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով՝ իրավասու մարմինների որոշմամբ: